## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար տնտեսական, սանիտարական և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 10-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/10-2 պայմանագրում 2018 թվականի հունիսի 15-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ
Վաճառողի առաջարկությամբ ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է:

Փոփոխության նկարագրություն
Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ում «25 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել է «50 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

Փոփոխության հիմնավորում
Պայմանագրի 8.6 կետ:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 10.05.2018թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/10-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«15» հունիսի 2018թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 10.05.2018թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/10-2» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ում «25 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «50 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Ավետիսյան 78 բն. 3 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 1150008878810100 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00103837 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Գ. Եսայան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |